ԴԱՍ 9.
Ընդունվելը որպես Աստծո զավակ՝ Որդեգրություն

	Ներածություն
	Բանալի համարներ
ՄԱՍ 9.1	Որդեգրությունն Աստվածաշնչում
ՄԱՍ 9.2	Արդարացում
ՄԱՍ 9.3	Որդեգրման զորությունը
ՄԱՍ 9.4	Որդեգրման խոստումը
ՄԱՍ 9.5	Որդեգրման նպատակը
ՄԱՍ 9.6	Որդեգրությունն ի գործ դնելը
ՄԱՍ 9.7	Աստծո ընտանիքը՝ եկեղեցին
	Ամփոփում և կիրառություն
	Աստվածաշնչյան ուսումնասիրություն
	Աստծո կամքը իմ կյանքի համար

Նշումների համար

Ներածություն

Այս դասը որդեգրության մասին է: Որդեգրությունը Հայր Աստծո սիրո և ապահովության արտահայտությունն է, որով Նա մեզ դարձնում է Իր ընտանիքի անդամ: Մեղքը մեզ բաժանել էր մեր երկնավոր ճշմարիտ Հորից (Եսայի 59:2), բայց Աստված Իր շնորհքով և ողորմությամբ ընդունեց մեզ Իր ընտանիքի մեջ: Ըստ մարդկային բնույթի՝ մենք արժանի չէինք դրան (Ա Հովհ. 3:1):

Որդեգրությունը յուրահատուկ մի բան է, և Աստծո ընտանիքում որդեգրվելը մեծ նշանակություն ունի: Դրա երկու կարևոր ասպեկտներն են.

- Մենք ընդունվում ենք Աստծո ընտանիքի մեջ (Գաղ. 4:5):
- Մենք ծնվում ենք Աստծո ընտանիքի մեջ (Հովհ. 1:12,13):

Աստծո ընտանիքին պատկանելը և Հիսուս Քրիստոսի հետ միացած լինելը մեծ առավելություն է, և սա է Հիսուսի աշակերտ լինելու շարժող ուժը:

> *«Վասնզի Քրիստոսի սերը սրիպում է մեզ»*
> (Բ Կորնթ. 5:14):

Սա նոր սկիզբ է: Մենք վերստին ծնվում ենք Աստծո ընտանիքի մեջ: Նախկինում եղած բոլոր բացասական գործոնները, որոնք մեզ կապանքների մեջ էին պահում, հաղթահարված են Հիսուսի արյան և Սուրբ Հոգու միջոցով: Մեր մեղքերը ներված են, և մենք մտնում ենք Աստծո հետ մի նոր փոխհարաբերության մեջ (Բ Կորնթ. 5:17): Որդեգրումը բացահայտում է մեր երկնավոր Հոր սիրտը: Նույնիսկ մինչ մեր ծնվելը Աստված ծրագրել էր որդեգրել մեզ Քրիստոսով (Եփես. 1:4, 5): Աստծո ընտանիքում ծնված ոչ մեկը պատահական չէ: Աստված դա Իր սրտում ուներ նախքան աշխարհի սկիզբը (Սաղմ. 139:13–16), մենք ծնված ենք Իր ընտանիքում հատուկ նպատակի համար (Եփես. 2:10):

> *«Որովհետև ես գիտեմ այն խորհուրդները, որ ունեմ ձեր մասին, ասում է Տերը,– խաղաղության խորհուրդներ և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը»* (Երեմ. 29:11):

Բանալի համարներ

Նշումների համար

Հռովմ. 8:15–18 Գաղ. 4:5–7
Հռովմ. 8:23–25 Եփես. 1:4–5

ՄԱՍ 9.1
Որդեգրությունն Աստվածաշնչում

Աստվածաշունչն ասում է, որ մենք որդեգրվել ենք Աստծո ընտանիքի մեջ: Որդեգրման համար կիրառվող հունարեն բառը ***հյոթեզիան*** է, որը Նոր Կտակարանում Պողոսն օգտագործում է հինգ անգամ (Հռովմ. 8:15, 23, 9:4, Գաղ. 4:5, Եփես.1:5): Այդ որդեգրումն ուներ հետևյալ բնութագրերը.

- Հայրն էր ներկայացնում իշխանությունը:
- Նախկին հարաբերությունները կոտրվեցին:
- Ակնառու պարտքն ու պարտավորությունները թողնվեցին:
- Անձը տեղափոխվեց նոր ընտանիքի Հոր իշխանության տակ:
- Հայրը համարվում էր բոլոր որդեգրված երեխաների սեփականության սեփականատերը:
- Հայրը պատասխանատու էր որդեգրված երեխայի կյանքի համար:
- Հորն էր վերապահված երեխային կարգուկանոնի մեջ դնելը:
- Հայրը պատասխանատու էր որդեգրված երեխայի վարքի համար:
- Ընտանիքի մյուս երեխաները նույնպես ընդգրկված էին որդեգրման մեջ՝ աջակցելով և ոգևորելով ընտանիքի նոր անդամին:

Նշումների համար

Ո՞րն է Հայր Աստծո կողմից որդեգրված լինելու կարևորությունը.

- Մենք էլ չենք ենթարկվում մեր հին տիրոջը (Գաղ. 3:26, 4:7):
- Մենք հիմա պետք է ամբողջովին հավատարիմ լինենք մեր Հայր Աստծուն:
- Այն, ինչ ունենք, Աստծունն է (ներառյալ մեր կյանքը):
- Աստված կպաշտպանի և կդաստիարակի մեզ որպես Հայր:
- Հայրը ակնկալում է, որ մենք ապրենք իր փառքի համար:
- Մենք պատկանում ենք Աստծո ընտանիքին:

Աստված տալիս է մեզ նաև Սուրբ Հոգին.

- Որ մեզ ազատի մեր նախկին կապանքներից (Գաղ. 4:6–7):
- Որ կնքի մեզ՝ որպես իր զավակներ (Հռովմ. 8:16, Եփես. 1:13,14):
- Որ վկայություն տա, որ մենք բաժնեկցում ենք Աստծո հարստությունը և ժառանգությունը (Հռովմ. 8:16–17):
- Որ մենք, որպես զավակներ, կարողանանք ապրել Իր զորության մեջ (Եփես. 3:16):

ՄԱՍ 9. 2
Արդարացում

Նշումների համար

Այն բնութագրերը, որ թվարկվեցին ՄԱՍ 9.1–ում, ցույց են տալիս որդեգրության *օրինական* և *փաստացի* կողմերը. օրինակ՝ նախկին հարաբերությունները արձակվել են, մեծ պայքարն ու պարտավորությունները թողնվել են, երեխան տեղափոխվել է իր նոր Հոր իշխանության ներքո:

> *«Արդ մենք, **հավատքով արդարացած լինելով**, Աստծո հետ խաղաղություն ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռով»* (Հռովմ. 5:1):

Արդարացումը փրկության համար կարևոր ասպեկտ է: Դա օրինական իմաստ ունի: Մենք գալիս ենք Աստծո առաջ՝ ինչպես դատավորի: Մեղքի պատճառով մենք մեղավոր ենք ճանաչվել, բայց Հիսուսը վերցրել է մեր պատիժը Իր մեջ հավատքի միջոցով:

- Մեր մեղքերի համար ստանում ենք ձրի ներում:
- Արդարացվում ենք Աստծո առջև:

Արդարացումն այնպիսին է, որ կարծես *երբեք չեմ էլ մեղանչել*, քանի որ ինձ հասանելի պատիժը Հիսուսը կրեց Իր վրա (Հռովմ. 8:1, 2, Բ Կորնթ. 5:21): Եվ Աստծո առջև գալիս ենք նոր դիրքով՝ ոչ թե ծառա, այլ որդի:

Մեզ մեր հին մեղավոր կյանքից ազատելու համար փրկագին պետք է վճարվեր:

> ***Հիսուսը վճարեց այդ գինը**: Մենք արդարացանք Իր արյան միջոցով: Նա մեզ համար հնարավոր դարձրեց Աստծո ընտանիքի մեջ նոր կյանք ունենալ առանց բեռի, կապանքների և անցյալի մեղավորության:*

Նշումների համար

ՄԱՍ 9.3
Որդեգրման զորությունը

Կանոնավոր կյանքում որդեգրված երեխան ստանում է նոր անուն. այն անունը, որը դնում են նրա նոր ծնողները: Նա ստանում է նաև իր նոր ընտանիքի առավելություններն ու արտոնությունները: Սա նաև իրական է մեզ համար Քրիստոսում (Ա Պետ. 2:10, Եփես. 2:17, 18):

Հովհաննեսը Իր Ավետարանի հենց սկզբում շեշտում է այն փաստը, որ մենք Աստծո որդիներ չենք այն դիրքի կամ կարողության արդյունքում, որ ունենք մարդկային մակարդակում: Մենք մարմնով բնականորեն ծնվում ենք Աստծո ընտանիքից դուրս, բայց հավատքի միջոցով օրինապես որդեգրվում ենք և ճշմարտապես ծնվում Աստծո ընտանիքում:

> *«Բայց, որոնք որ Նրան ընդունեցին,* ***իշխանություն*** *տվավ նրանց, Աստծո որդիներ լինելու, որոնք ոչ արյունից են, ոչ մարմնի կամքից, և ոչ էլ մարդի կամքից, այլ Աստվածանից»* (Հովհ. 1:12,13):

Հունարեն ***էքսուզիա*** բառը նշանակում է *իշխանություն կամ իրավունք:* Դա վստահված իշխանություն է, և դու ստանում ես այդ իշխանությունը Աստծո ընտանիքում ծնվելու միջոցով: Աստված քո հայրն է, այս պատճառով դու ստացել ես Նրա իրավունքը: Սուրբ Հոգին *որդեգրության Հոգին* է: Մեր սրտերում Աստծուն պատկանելու համոզվածությունը բերում է Սուրբ Հոգին: Այս համոզվածության շնորհիվ մեր մեջ ամուր հիմք է դրվում. ամեն օրը ապրել որպես քրիստոնյա:

Աշակերտը Աստծո զավակն է, որը ստանում է զորություն, կարողություն և վստահություն:
Նա գիտի.

- ***Ով է ինքը:***
- ***Ում է պատկանում ինքը:***

ՄԱՍ 9.4
Որդեգրման խոստումը

Նշումների համար

Որպես թագավորության որդիներ՝ մենք որդեգրվել ենք այն մեծ խոստումով, որ փրկված ենք ոչ միայն ներկայում, այլ հավիտենապես (Հռովմ. 8:17):

Հիսուսը, տեսնելով գալիք ուրախությունը, վեր առավ խաչը (Եբր. 12:2): Քրիստոսին ձգտելու մեր փափագը նույնպես սրբանալու շարժառիթ է (Ա Հովհ.3:2–3): Հիսուսի մեջ ստանում ենք ոչ միայն նոր կյանք, այլ նաև հույս (Երեմ. 29:11, Կող. 1:27):

Մենք ոչ միայն իրավունք ունենք դառնալ Քրիստոսի զավակները, այլ նաև որպես Աստծո որդիներ՝ ժառանգություն ստանալու իրավունք ունենք (Հռովմ. 8:17):

Ճշմարտության պսակը ստանալու սպասումը, որը կտրվի մեզ երկրային կյանքի ավարտից հետո, Աստծո համար ապրելու և Նրան ծառայելու շարժառիթ է հանդիսանում:

> *«Այնուհետև մնում է ինձ արդարության պսակը, որ Տերը կտա ինձ այդ օրերումը, արդար Դատավորը և ոչ միայն ինձ, **այլ նաև այն բոլորին, ովքեր սիրեցին Նրա հայտնությունը**»* (Բ Տիմ. 4:8):

Նշումների համար

ՄԱՍ 9.5
Որդեգրման նպատակը

Հայրն ի՞նչ նպատակներ ունի՝ մեզ որդեգրելով:

Նա ուզում է, որ մենք.

- Հաստատված լինենք Հիսուսի կերպարանքով (Հռովմ. 8:29):
- Սուրբ և անարատ լինենք Իր համար (Եփես. 1:4):
- Բարի գործեր անենք, որը Նա նախապես պատրաստել է մեզ համար (Եփես. 2:10):
- Ամուր կառչենք Իր սիրուց (Եփես. 3:14–19):
- Բարի պատերազմը պատերազմենք միասին՝ Իր մեջ զորավոր լինելով (Եփես. 6:10–20):

Որդեգրությամբ միայն Հոր ընտանիքի ժառանգությունը չենք բաժնեկցում, այլ նաև արտահայտում ենք Նրա էությունը: Նրա նպատակն է, որ մենք նմանվենք Հիսուսին (Հռովմ. 8:29):

ՄԱՍ 9.6
Որդեգրությունն ի գործ դնել

Նշումների համար

Մենք կանչված ենք Հոր հետ վստահությամբ և պարզությամբ փոխհարաբերվելու: Հիսուսի զորավոր ծառայության գաղտնիքը կայանում էր Հոր հետ շատ մտերիմ փոխհարաբերության մեջ:

Լեռան քարոզի ժամանակ Հիսուսն Իր հետևորդների հետ կիսվում էր Աստծո թագավորության մի քանի գաղտնիքներ: Նա սովորեցնում էր նրանց հուսալ իրենց երկնավոր Հորը և ապրել Նրա Խոսքի և պատվի համար:

Սա նշանակում է.

- Փառավորել Հորը (Մատթ. 5:16):
- Սիրել այնպես, ինչպես Հայրն է սիրում (Մատթ. 5:44–48):
- Կիսվել Հոր հետ (Մատթ. 6:9–13):
- Վստահել Հորը (Մատթ. 6:25–26):
- Հաճեցնել Հորը (Մատթ. 6:17–18):

Աստված ուզում է Իր հետ լավ փոխհարաբերության մեջ ապրենք: Ճշմարտությունն իմանալ, առանց այն ապրելու, երբեք այն իրական չի լինի մեզ համար: Սուրբ Հոգով մեզ տրվել է ամեն ինչ, որպեսզի կարողանանք ապրել այս ճշմարտությունն իրապես (Բ Պետ. 1:13):

Աստված վարվում է մեզ՝ հետ ինչպես Իր զավակների, այլ ոչ թե՝ հեռավոր ծանոթների: Սա նշանակում է, որ ժամանակ առ ժամանակ մենք կճանաչենք Աստծո պատժող ձեռքը մեր կյանքում: Նա կուղղի և կարգապահության մեջ կվարժեցնի մեզ, որ որպես որդիներ՝ կարողանանք աճել պատասխանատվության մեջ (Եբր. 12:7–11):

Նշումների համար

ՄԱՍ 9.7
Աստծո ընտանիքը՝ եկեղեցին

Նոր Կտակարանում եկեղեցին համարվում է Աստծո ընտանիքը:
Աստված ուզում է հայտնել Իրեն աշխարհին եկեղեցու միջոցով:

Եկեղեցին վկայում է Աստծո.

- Բազմապատիկ իմաստությունը (Եփես. 3:10):
- Սերը (Եփես. 3:17, 18, 19):
- Զորավոր գործերը (Ա Պետ. 2:9, Սաղմ. 145:11, 12):

Երբ եկեղեցու վարքը անաղարտ է, այն կդրսևորի Աստծո էությունը: Դրա համար էլ շատ անհրաժեշտ է, որ Աստծո զավակների միջև լինի սեր և միություն: Ապա ուրիշները կտեսնեն, թե ինչ է նշանակում պատկանել Աստծո ընտանիքին:

> *«Սրանով կգիտենան ամենքը թե Իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք»* (Հովհ. 13:35):

Ամփոփում և կիրառություններ

Նշումների համար

1. Որդեգրումով որդուն տեղ է տրվում ընտանիքում և պայմաններ ստեղծվում նրա համար, թեև ծնունդով նա չի պատկանում այդ ընտանիքին: Մենք ոչ միայն որդեգրվում, այլ նաև ծնվում ենք Աստծո ընտանիքի մեջ: Աստված մեր ճշմարիտ Հայրն է:
2. Մենք, որպես որդիներ, կարիք ունենք ապրելու Աստծո բարօրության մեջ և անելու այն, ինչ Հիսուսն արեց: Նա նման է մի ավագ եղբոր, Որը կատարյալ օրինակ է մեզ համար, թե ինչպես լինել Աստծո որդի:
3. Աստված սիրում է մեզ: Սիրուց դրդված՝ Նա ընտրեց մեզ հավիտյան իր որդիները լինելու և, հարկ է, որ սա լինի մեր շարժառիթը՝ սիրելու և ծառայելու մեր Տիրոջն ու Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:
4. Աստված ուղղակի մեզ չի թողնում ինքնուրույն ապրել մեր կյանքը, այլ գալիս է և օգնում մեզ Իր Սուրբ Հոգով, որ որպես Իր զավակներ՝ ապրենք Իր ժառանգության օրհնությունները:
5. Աստված, մեզ որդեգրելով, դարձրեց Իր ընտանիքի՝ եկեղեցու մի մասնիկը: Մենք ձեռք ենք բերում նոր քույրեր և եղբայրներ: Այս ընտանիքում մենք պատասխանատվություն ունենք հոգ տանել մեկս մյուսի համար:

Որպես Աստծո զավակներ՝ մեր ցանկությունները փոխվում են, և սկսում ենք փնտրել Աստծո կամքը: Մեր հաջորդ աստվածաշնչյան ուսումնասիրությունը հետևյալն է՝ *Աստծո կամքն ինչ համար,* և այն ցույց կտա մեզ, թե ինչպես կարող ենք զորանալ այս ոլորտում:

Նշումների համար

Աստվածաշնչյան ուսումնասիրություն
Աստծո կամքը մեզ համար

Մարդու կայացրած ընտրությունները ազդում են իր ամենօրյա կյանքի և հավիտենական նպատակների վրա: Աստված մարդուն ազատ կամք է տվել և երբեք չի հարկադրում: Մեր կամքն է ընտրում՝ չա՞րը, թե՞ բարին (տե՛ս նաև *Աշակերտի անհատականությունը*): Երբ մարդու կամքը հաշմաձայնության մեջ է Աստծո կամքի հետ, միություն է կերտվում, որը բերում է ներդաշնակություն մարդու և Իր Ստեղծողի միջև: Երբ նման միություն է լինում, անձը ազատվում է իր մարմնավոր, մեղավոր կամքից:

> *Աշակերտի համար անհրաժեշտ է, որ իր կամքը լինի ազատագրված, արդակված և համապատասխան Աստծո կամքին:*

Աստվածաշնչյան այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես մեր մարմնավոր կամքը կարող է ազատագրված լինել և նպաստել Աստծո կամքին ներդաշնակ լինելու մեջ:

1. Կարդա՛ Ծննդ. 2:15–17: Ինչո՞ւ Աստված ստեղծեց մարդուն ազատ կամքով.

   _____

   _____

2. Կան մարդիկ, ովքեր չեն ընդունում, որ Աստված մարդուն ստեղծեց ազատ կամքով, բայց Աստվածաշունչը շատ պարզ է խոսում մարդու կամքի մասին:

   Կարդա՛ հետևյալ համարները.
   Ես. 50:15, Երեմ. 2:8, 6:17, Հռովմ. 7:18, Ա Թես. 4:3.

   Ստորև բերվածները լրացրո՛ւ «Ճիշտ է» կամ «Սխալ է».

   ա) Ի ծնե մարդը կարող է անել այն, ինչ ցանկանում է:

   _____

   բ) Կամքը կարող է մերժել Աստծո փրկության առաջարկը:

   _____

   գ) Աստված միշտ ղեկավարում է ինչ–որ մեկի կամքը:

   _____

3. Անհրաժեշտ է, որ աշակերտի կամքը համապատասխանի Աստծո կամքին: Հետևյալ համարները խոսում են Աստծո կամքը ***կատարելու*** կամ ***չկատարելու հետևանքների*** մասին: Եթե մեջբերված համարը վերաբերում է Աստծո կամքը կատարելուն, նշի՛ր «Այո», իսկ եթե վերաբերում է Աստծո կամքը չանելուն, նշի՛ր «Ոչ»: Այնուհետև նշի՛ր այդ ընտրության հետևանքները:

Նշումների համար

ա) Կարդա՛ Մարկ. 21:28–31.

❍ Այո:

❍ Ոչ:

Քրիստոսի հետ ունեցած մեր փոխհարաբերության հետևանքները. _____

բ) Կարդա՛ Մատթ. 21:28–31.

❍ Այո:

❍ Ոչ:

Մեր խղճի հետևանքները. _____

_____

գ) Կարդա՛ Մատթ. 7:21, Ա Հովհ. 2:17.

❍ Այո:

❍ Ոչ:

Մեր փրկության հետևանքները. _____

_____

դ) Կարդա՛ Հովհ. 9:31, Ա Հովհ. 5:14.

❍ Այո:

❍ Ոչ:

Մեր աղոթքների հետևանքները. _____

_____

ե) Կարդա՛ Հովհ. 17:4.

❍ Այո:

❍ Ոչ:

Աստծո փառքի հետևանքները. _____

_____

Նշումների համար

4. Հիսուսը եկավ ճանաչեցնելու Հոր կամքը: Ստորև նշված համարները համապատասխանեցրո՛ւ Աստծո կամքը բնութագրող արտահայտությունների հետ.

ա) ☐	Բ Պետ. 3:9	1) Չի ուզում, որ որևէ մեկը կորավի:
բ) ☐	Եփես. 1:5	2) Քո սրբացումը:
գ) ☐	Մատթ. 9:13	3) Որպեսզի Աստծո որդիներ կոչվենք:
դ) ☐	Ա Պետ. 2:15	4) Ողորմություն է ուզում և ոչ թե զոհ:
ե) ☐	Ա Թես. 4:3	5) Բարի՛ք արա ուրիշներին:

5. Հիսուսը ոչ միայն քարոզում էր Աստծո կամքը, այլ նաև կատարում էր (Հովհ. 8:28, 29): Իր խոր ***փափագն*** էր Հորը փառավորել: Ուստի Նա ազատ էր կատարելու Իր Հոր կամքը: Հետևյալ սուրբգրային համարները նկարագրում են, թե ինչ էր մտածում Հիսուսը Հոր կամքը կատարելու մասին: Համապատասխանեցրո՛ւ համարը ճիշտ արտահայտության հետ.

ա) ☐	Հովհ. 5:30	1) Հիսուսը փառավորեց Աստծուն, երբ երկրի վրա էր:
բ) ☐	Հովհ. 6:38	2) Հիսուսը չէր ուզում կատարել Իր սեփական կամքը:
գ) ☐	Հովհ. 17:4	3) Հիսուսն աղոթում էր, որ ոչ թե Իր կամքը լինի, այլ Իր Հոր:
դ) ☐	Ղուկ. 22:42	4) Հիսուսը երկնքից իջավ Աստծո կամքը կատարելու համար:

6. Քանի որ մեր սեփական կամքը բնությամբ մարմնավոր է և կենտրոնացած սեփական ցանկությունների վրա, ուստի մենք չունենք Աստծո կամքը կատարելու ճիշտ դրդապատճառ: Կամքը ներգործվում է շարժառիթներից: Հիշի՛ր վերջերս կայացրած մի կարևոր որոշման մասին: Հիշո՞ւմ ես՝ որն էր քո շարժառիթը այդ որոշումը կայացնելու համար:

Տե՛ս հետևյալ հնարավոր տարբերակները.

Նշումների համար

- ❍ Պատիվ:
- ❍ Նախանձ, չարություն:
- ❍ Սեր Աստծո հանդեպ:
- ❍ Փող:
- ❍ Վախ:
- ❍ Աստծո Խոսք:
- ❍ Ավանդույթ:
- ❍ Դառնություն:
- ❍ Քո խիղճը:
- ❍ Ժլատություն:
- ❍ Կարիերա:
- ❍ Կարեկցություն:

7. Որպեսզի մեր կամքը փոխվի, կարիք ունենք, որ մեր սիրտը փոխվի: Մեր կամքը պետք է ազատագրվի մարմնավոր ցանկություններից և նորից վերադարձվի Սուրբ Հոգու առաջնորդության ներքո:

ա) Կարդա՛ Գ. Առ. 22:14: Հնարավո՞ր է իմանալ Աստծո կամքը.

_____

բ) Կարդա՛ Միք. 6:8: Ինչպիսի՞ շարժառիթ է պահանջում Աստված մեզանից.

_____

գ) Կարդա՛ Փիլիպ. 2:13: Ո՞վ է դարձնում մեզ կամեցող.

_____

8. Աստված է մեր մեջ գործում, որ Իր կամքը կատարենք: Սա ***Աստծո պատասխանատվությունն է:*** Հարց 7–ում արդեն ասվեց, որ սրտի փոփոխության կարիք ունենք: ***Մեր պատասխանատվությունն է*** Աստծուն հնարավորություն տալ այդ անելու, քանի որ այն ինքնաբերաբար չի լինի:

Յուրաքանչյուր համարի կողքին գրի՛ր, թե ինչ է Աստված պահանջում մեզանից.

ա) Մատթ. 21:30, 31 _____

_____

բ) Սաղմ. 51:12 _____

_____

Նշումների համար

գ) Հռովմ.12:1, 2 _____

_____

դ) Փիլիպ. 2:1–8 _____

_____

ե) Փիլիպ. 2:12 _____

_____

9. Ամփոփելով՝ լրացրո՛ւ բաց թողնված տեղերը.

Մեր կամքը ի ծնե _____ է, և ուստի մենք անկարող ենք _____ Աստծուն: Միայն _____ կարող է փոխել ինձ, որ կատարեմ Իր կամքը: Ուստի իմ _____ կարիք ունի փոխվելու:

Ֆ. Բ. Մեյերը մի մարդ է, որին Աստված զորավոր կերպով գործածել է, և նա սովորել էր աղոթել հետևյալ աղոթքը.

«Տե՛ր, ես չեմ կարող ասել, որ կամենում եմ, բայց ես պատրաստ եմ դառնալ կամեցող»:

Ո՞ւր կամենո՞ւմ ես աղոթել նույն աղոթքը.

- ❍ Այո:
- ❍ Ոչ:

11 Անգլիայում Ջորջ Մյուլլերը հավատքի հայտնի հերոս էր, ով ամբողջապես վստահում էր Աստծուն հազարավոր որբերի ամենօրյա կարիքները հոգալու համար: Նա նման վստահություն ուներ, որովհետև համոզված էր, որ ինքը Աստծո կամքի մեջ է: Շատերը հարցնում էին նրան Աստծո կամքը իմանալու գաղտնիքը, որովհետև նա երբեք ոչինչ չէր ձեռնարկում, մինչև չհամոզվեր, որ դա Աստծո կամքն է:

Նա թողել է մեզ Աստծո կամքը ճանաչելու իր սկզբունքները.

ա) Առաջին հերթին ես քննում եմ իմ սիրտը, որ տեսնեմ, թե

Նշումների համար

այն ***ճի՞շտ շարժառիթ*** ունի, որպեսզի համոզվեմ, որ տվյալ պարագայում իմ սեփական կամքը չի գործում (մենք արդեն քննարկել ենք սա 1–10 հարցերում): 10–ից 9–ը մենք կճանաչենք Աստծո կամքը, երբ մեր սրտերը պատրաստ լինեն անելու Նրա կամքը, ինչ էլ որ այն լինի:

բ) Դրանից հետո ես սկսում եմ զգուշանալ, որ ***չառաջնորդվեմ իմ զգացմունքներով***, քանի որ այն միայն շփոթմունքի պատճառ կդառնա:

գ) Ես փնտրում եմ Աստծո կամքը ***Հոգու*** կամ ***Խոսքի*** միջոցով կամ էլ համատեղությամբ: Հոգին և Խոսքը պետք է համաձայնության մեջ լինեն:

դ) Հետո ես հաշվի եմ առնում այն ***հանգամանքները***, որ Աստված է ապահովել: Ընդհանուր առմամբ, երբ համատեղում ես Հոգին և Խոսքը, պարագաները հաստատում են Աստծո կամքը:

ե) ***Աղոթքի*** մեջ ես խնդրում եմ Աստծուն պարզ ձևով հայտնել ինձ Իր կամքը: Այսպիսով՝ աղոթքի միջոցով Աստծո Խոսքը ուսումնասիրելու և դրա շուրջ խորհելու միջոցով ես հասկանում եմ Աստծո կամքը: Երբ անընդմեջ աղոթելուց հետո իմ սրտում խաղաղություն եմ ունենում, ապա կամենում եմ հնազանդ լինել Աստծուն դրանում:

Նշումների համար

Պատասխաններ

1. Որովհետև Աստծո ցանկությունն է, որ մարդը ընտրի սիրել և հնազանդվել Իրեն: Նա ունի իր սեփական պատասխանատվությունը:

2. ա) Սխալ է:
   բ) Ճիշտ է:
   գ) Սխալ է:

3. ա) Այո, ընտանեկան փոխհարաբերություն Հիսուսի հետ, պատկանել Նրան:
   բ) Ոչ, մեր խիղճը մեղադրում է մեզ:
   գ) Այո, կունենանք հավիտենական կյանք:
   դ) Այո, Աստված լսում է մեր աղոթքը:
   ե) Այո, Աստված փառավորվում է:

4. ա) ☐ բ) ☐ գ) ☐ դ) ☐ ե) ☐

5. ա) ☐ բ) ☐ գ) ☐ դ) ☐

6. Անձնական նկատառումներ:

7. ա) Այո:
   բ) Ճիշտ գործել, ողորմություն սիրել, խոնարհ լինել:
   գ) Աստված, իր բարի նպատակի համար:

8. ա) Կամենալ, կատարել Աստծո կամքը:
   բ) Աղոթել մաքուր սրտով և հաստատուն հոգով:
   գ) Ամբողջական նվիրում և նոր միտք:
   դ) Ընտրել՝ ունենալ այն նույն շարժառիթը, որ Քրիստոսն ուներ:
   ե) Թույլ տալ Աստծուն անել Իր գործը իմ մեջ:

9. Մեղանչական, փառավորել, Աստված, սիրտը:

10. Անձնական նկատառումներ: